

## **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

### **Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին 1998 թվականի սեպտեմբերի 11-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին**

Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին 1998 թվականի սեպտեմբերի 11-ի Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով 2009թ. հոկտեմբերի 9-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների Ղեկավարների խորհրդի կողմից հաստատված Որոշման՝ ճյուղային համագործակցության մասին Ընդհանուր դրույթներով, համաձայնեցին հետևյալի մասին.

#### **Հոդված 1**

Կողմերն ընդունում են Միջկառավարական խորհրդի՝ անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտին վերաբերող Կանոնակարգ՝ նոր խմբագրությամբ, որը կցված է սույն Արձանագրությանը և 1998 թվականի սեպտեմբերի 11-ի՝ անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրի անբաժանելի մասն է:

#### **Հոդված 2**

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Համաձայնագիրն ստորագրած Կողմերի՝ նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգի կատարման մասին վերջին ծանուցագիրն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

#### **Հոդված 3**

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու պահից դադարում է գործել Անտառարդյունաբերական համալիրում և անտառային տնտեսության ոլորտում 1998 թվականի սեպտեմբերի 11-ի համագործակցության մասին Համաձայնագրում

փոփոխություններ կատարելու վերաբերյալ 2006 թվականի մայիսի 25-ի Արձանագրությունը:

Կատարված է Ազգաբաղ քաղաքում 2012 թվականի մայիսի 30-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների Գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա վավերացված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության  
Կառավարության կողմից**

-----

**Ռուսաստանի Դաշնության  
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

**Հայաստանի Հանրապետության  
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

**Տաջիկստանի Հանրապետության  
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

**Բելառուսի Հանրապետության  
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

**Թուրքմենստանի Կառավարության  
կողմից**

-----

**Ղազախստանի Հանրապետության  
Կառավարության կողմից**

-----

**Ուզբեկստանի Հանրապետության  
Կառավարության կողմից**

-----

**Ղրղզստանի Հանրապետության  
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

**Ուկրաինայի Կառավարության կողմից**

-----

**Մոլդովայի Հանրապետության  
Կառավարության կողմից**

-----

Հավելված  
Անտառարդյունաբերական համալիրի և  
անտառային տնտեսության բնագավառում  
համագործակցության մասին 1998 թ.  
սեպտեմբերի 11-ի Համաձայնագրի  
(2012 թ. մայիսի 30-ի խմբագրությամբ)

## **ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

### **Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտի միջպետական խորհրդի մասին**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

1.1. Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտի միջպետական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծված է ըստ անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտում համագործակցության մասին 1998 թվականի սեպտեմբերի 11-ի Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտում համագործակցության զարգացման նպատակով:

1.2. Խորհուրդը հանդիսանում է Անկախ Պետությունների Համագործակցության ճյուղային համագործակցության ապահովման մարմին, որն իր գործունեությունն իրականացնում է իր լիազորությունների շրջանակներում և հաշվետու է ԱՊՀ պետությունների Կառավարությունների ղեկավարների խորհրդին:

1.3. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է ԱՊՀ պետությունների Կանոնադրությամբ, ԱՊՀ շրջանակներում կնքված պայմանագրերով ու որոշումներով, ինչպես նաև սույն Համաձայնագրի դրույթներով:

1.4. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների Գործադիր կոմիտեի, ինչպես նաև Համագործակցության այլ մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

#### **2. Խորհրդի խնդիրներն ու գործառույթները**

Խորհրդի հիմնական խնդիրը Համաձայնագրի մասնակից պետությունների անտառային տնտեսությունների և անտառավերամշակման համալիրների զարգացման համար պատասխանատու նախարարությունների, գերատեսչությունների ու պետական այլ կառույցների փոխադարձ համագործակցության մեխանիզմների զարգացումն ու կատարելագործումն է:

Հիմնական խնդիրն իրականացնելու նպատակով Խորհուրդը կատարում է հետևյալ գործառույթները.

2.1. Համագործակցության մասնակից պետությունների տնտեսավարող սուբեկտների միջև անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության արտադրանքի շուկայի զարգացման և կայացման հետ կապված առաջարկների մշակում՝ տեսականու ընդլայնման և կոոպերատիվ կապերի փոխշահավետ ձևավորման միջոցով:

2.2. Համագործակցության նորմատիվ իրավական բազայի կատարելագործում անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտում:

2.3. Համագործակցության մասնակից պետությունների անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտի արտադրանքը պաշտպանելու նպատակով ներքին շուկայի համաձայնեցված միջոցառումների մշակում:

2.4. Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտի գիտաարտադրական ներուժի զարգացմանը նպաստում:

2.5. Համաձայնագրի շրջանակներում համատեղ նախագծերի և ծրագրերի մշակման խնդիրների համակարգում:

2.6. Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտի Համագործակցության մասնակից պետությունների ֆինանսարդյունաբերական գործունեության համատեղ օբյեկտների ստեղծմանն ուղղված առաջարկների մշակում:

2.7. Աջակցություն Համաձայնագրի մասնակից պետությունների անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության մեջ ներդրումների ու վարկերի, ինչպես նաև արտաբյուջետային դրամական միջոցների ներգրավմանը:

2.8. Աջակցություն իրավական, վարչական, սոցիալ-տնտեսական տեսանկյունից անտառների կայուն կառավարման և անտառային ռեսուրսների պահպանման և վերարտադրման ոլորտում փոխշահավետ համագործակցության զարգացմանը: Շարունակական, կայուն և անսպառ անտառօգտագործում ապահովող պայմանների ստեղծում:

2.9. Իր լիազորությունների շրջանակներում փոխհամաձայնեցված մոտեցումների մշակում, որոնք ուղղված են շրջակա միջավայրի բնապահպանական խնդիրների լուծմանը՝ հաշվի առնելով առկա համաշխարհային փորձը:

2.10. Առաջարկությունների նախապատրաստում՝ անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտում գիտատեխնիկական համագործակցության գերակա ուղղություններով, աջակցություն անցկացման և ֆինանսավորման հարցերում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող, միասնական թեմատիկայով, գիտատեխնիկական տեղեկատվությամբ և առաջավոր փորձի փոխանակմամբ գիտահետազոտական և փորձարարական-նախագծային աշխատանքներին:

2.11. Աջակցություն անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտի գործունեությունը կարգավորող ազգային նորմատիվ իրավական փաստաթղթերի ներդաշնակեցմանն ուղղված աշխատանքներին:

2.12. Աջակցություն գիտական, ուսումնական և այլ բնույթի հրատարակությունների թողարկմանն ուղղված՝ տեղեկատվական և գովազդային գործունեության կազմակերպմանը:

2.13. Աջակցություն կադրերի նախապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման, շուկայագիտության և կառավարման դասընթացների ու դպրոցների կազմակերպման, մասնագիտական գիտելիքների տարածման, կուտակված փորձի և տեղեկատվության, ցուցահանդեսների, սեմինարների, գիտաժողովների և համաժողովների հետ կապված միջոցառումների կազմակերպման գործում:

2.14. Խորհրդի նպատակների ու խնդիրների կատարման համար Խորհրդի ընդունած որոշումների և այլ գործառույթների մոնիտորինգի իրականացում:

### **3. Խորհրդի իրավունքները**

Խորհուրդն իր խնդիրները և գործառույթները իրականացնելու համար իրավունք ունի.

3.1. Նախապատրաստելու ու սահմանված կարգով Կառավարությունների ղեկավարների խորհրդի և ԱՊՀ տնտեսական խորհրդի քննարկամանը ներկայացնելու Խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերով փաստաթղթերի նախագծեր:

3.2. Սահմանված կարգով հարցում կատարելու անտառտնտեսության և անտառ-վերամշակման համալիրի զարգացման համար Համաձայնագրի մասնակից պետությունների պատասխանատու նախարարություններին, գերատեսչություններին և այլ մարմիններին, ինչպես նաև ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմիններին՝ խորհրդի իրավասության հետ կապված տեղեկատվության հարցերով:

3.3. Ստեղծելու մշտական կամ ժամանակավոր աշխատանքային խմբեր Խորհրդի գործունեության առանձին ուղղություններով, սահմանելու գործառնության կարգը և հսկողություն իրականացնելու դրա նկատմամբ:

3.4. Մշակելու և հաստատելու Խորհրդի աշխատանքի Կանոնակարգը և նրա մեջ կատարելու փոփոխություններ:

3.5. Իր իրավասության սահմաններում ընդունելու որոշումներ և հանձնարարականներ:

### **4. Խորհրդի ձևավորման կարգը**

4.1. Խորհուրդը ձևավորվում է Համաձայնագրի մասնակից պետությունների նախարարությունների, գերատեսչությունների և այլ կառույցների ղեկավարներից, որոնք պատասխանատու են անտառային տնտեսության և անտառվերամշակման համալիրի զարգացման համար:

Համաձայնագրի մասնակից պետությունը Խորհուրդ է ուղղում երկու ներկայացուցիչների. մեկին՝ անտառարդյունաբերական համալիրի կառավարման մարմնի կողմից, մյուսին՝ անտառային տնտեսության կառավարման մարմնի կողմից:

Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն Խորհրդում ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի նիստում Խորհրդի անդամներին փոխարինելու համար գործուղված անձանց լիազորությունները պետք է լինեն հաստատված:

4.2. Խորհրդի կազմի մեջ կարող են մտնել ԱՊՀ անտառային ճյուղերի աշխատակիցների արհմիությունների Դաշնության նախագահը և ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը՝ յուրաքանչյուրը խորհրդակցական ձայնի իրավունքով:

4.3. Խորհրդում նախագահությունն իրականացվում է հերթականությամբ՝ Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության՝ իր ներկայացուցիչների անունից, ԱՊՀ մասնակից պետության անվան ռուսերեն այբբենական կարգով, որպես կանոն, մեկ տարուց ոչ ավել ժամկետով, եթե Խորհրդի որոշմամբ այլ բան չի սահմանվում:

Խորհրդի նախորդ և հաջորդ նախագահները հանդիսանում են համանախագահներ:

Խորհրդի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունները փոխանցվում են համանախագահներից մեկին:

## 5. Աշխատանքի կազմակերպում

5.1. Խորհուրդն իր նիստերն անցկացնում է տարին առնվազն մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել Համաձայնագրի ցանկացած մասնակից պետության նախաձեռնությամբ և Համաձայնագրի մասնակից պետությունների մեծ մասի համաձայնությամբ:

5.2. Խորհրդի որոշումներն իրավազոր են, եթե Խորհրդի նիստին ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

5.3. Խորհրդի հերթական նիստի անցկացման ժամանակն ու վայրը որոշվում է Խորհրդի նախորդ նիստում:

5.4. Խորհուրդն իր աշխատանքը կազմակերպում է Խորհրդի կողմից հաստատված աշխատանքների տարեկան ծրագրի հիման վրա, ինչպես նաև իր գործունեության վերաբերյալ տարեկան տեղեկատվություն է ներկայացնում ԱՊՀ Գործադիր կոմիտեին:

5.5. Խորհրդի որոշմամբ նրա աշխատանքներին դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել Համաձայնագրի մասնակից պետություն չհանդիսացող պետությունների շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչները և կազմակերպությունները՝ ներառյալ միջազգայինները:

5.6. Խորհրդի որոշումները կրում են հանձնարարականի բնույթ:

Խորհրդի գործունեության հիմնական հարցերով որոշումներն ընդունվում են համաձայնությամբ:

Խորհրդի ցանկացած անդամ այս կամ այն հարցի վերաբերյալ կարող է հայտնել իր շահագրգիռ չլինելու մասին, որը չի կարող խոչընդոտ լինել որոշում ընդունելու համար:

Որոշմանը համաձայն չլինող Խորհրդի անդամները կարող են հայտնել հատուկ կարծիք, որը նշվում է արձանագրության մեջ:

Ընթացակարգային հարցերով որոշումներն ընդունվում են Համաձայնագրի մասնակից պետությունների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7. Համաձայնագրի որևէ մասնակից պետության շահերն անմիջականորեն շոշոփող Խորհրդի որոշումները չեն կարող ընդունվել նրա ներկայացուցչի բացակայության պայմաններում:

5.8. Խորհրդի որոշումներն ստորագրվում են Խորհրդի նախագահի կողմից:

5.9. Խորհրդի նիստերն անցկացվում են Խորհրդի աշխատանքի Կանոնակարգին համապատասխան:

5.10. Նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքը, ղեկավարում է նիստերը, ապահովում է Կանոնակարգի պահպանումը:

5.11. Խորհրդի գործունեության տեխնիկական-կազմակերպչական և տեղեկատվական ապահովումն իրականացնում է Խորհրդի քարտուղարությունը:

Խորհրդի քարտուղարության գործառույթները դրվում են Համաձայնագրի մասնակից պետության իշխանության պետական մարմնի վրա, որի ներկայացուցիչը ԱՊՀ Գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ նախագահում է Խորհրդում:

Խորհրդի քարտուղարության ղեկավար է հանդիսանում Խորհրդում նախագահող պետության պետական իշխանության մարմնի ներկայացուցիչը, իսկ քարտուղա-

րության ղեկավարի տեղակալ է հանդիսանում ԱՊՀ Գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցիչը:

5.12. Խորհրդի հերթական նիստի նյութերն ուղարկվում են Խորհրդի անդամներին նիստի անցկացման ժամկետից ոչ ուշ, քան 30 օր առաջ:

5.13. Խորհրդի նիստերի ժամանակ ընդունված փաստաթղթերն ուղարկվում են նրա բոլոր անդամներին երկշաբաթյա ժամկետում:

5.14. Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

## **6. Եզրափակիչ դրույթներ**

6.1. Խորհրդի նիստերի անցկացման կազմակերպման հետ կապված ծախսերն իրականացվում են Համաձայնագրի մասնակից ընդունող պետության պետական իշխանության համապատասխան մարմինների հաշվին:

Խորհրդի անդամների և նիստերի այլ մասնակիցների գործուղման ծախսերն իրականացվում են Համաձայնագրի մասնակից ուղարկող պետության պետական իշխանության մարմինների և կազմակերպությունների կողմից:

6.2. Խորհրդի լուծարման որոշումը դիտարկվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհուրդի կողմից:

## **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

### **Ուկրաինայի**

**Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին 1998 թվականի սեպտեմբերի 11-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ**

Ուկրաինան իրեն ներպետական ընթացակարգերի անցկացման հետ կապված դիրքորոշման իրավունք է վերապահում:

**Ուկրաինայի Վարչապետ՝**

**Ն. Ազարով**